ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Գևորգ Պապոյանին
«Արենի Փառատոն» հիմնադրամի
տնօրեն Նունե Մանուկյանից

Դիմում

Հարգելի պարոն Պապոյան,

Խնդրում ենք քննարկել և հնարավորության դեպքում ընդգրկել **«Արենի Փառատոն» հիմնադրամին** ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն առընթեր հասարակական խորհրդի կազմում՝ որպես կազմակերպություն, որն ունի զգալի ներդրում Հայաստանում իրադարձային տուրիզմի զարգացման գործում:

Հիմնադրամի մասին

«Արենի Փառատոն» հիմնադրամը շուրջ 17 տարվա ընթացքում իրականացնում է բովանդակային փառատոններ Հայաստանի տարբեր մարզերում՝ նպաստելով տարածաշրջանային զարգացմանը, համայնքային ներգրավվածության բարձրացմանը և Հայաստանի՝ որպես զբոսաշրջային ուղղության, ներկայացմանը թե՛ ներքին, թե՛ միջազգային շուկաներում:

Հիմնադրամի նախաձեռնած և կազմակերպած փառատոններն են՝

- **Արենի Գինու Փառատոն** – Վայոց ձորի մարզ, Արենի գյուղ (17 տարիներ անընդմեջ)
- **Գաթայի Փառատոն** – Վայոց ձորի մարզ, Խաչիկ գյուղ (8 տարիներ անընդմեջ)
- **Թթի Փառատոն** – Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղ (5 տարիներ անընդմեջ)
- **Արհեստ և Արվեստի Փառատոն** – Շիրակի մարզ, Գյումրի քաղաք (իրականացվել է 3 տարի անընդմեջ)
- **ԶարկՖեստ ֆիլմաշար** – իրականացվել է մեկ անգամ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

Բացի սեփական նախագծերից, հիմնադրամը նաև աջակցել է այլ համայնքներում իրականացվող մի շարք միջոցառումների՝ այդ թվում՝

- **Տոլմայի փառատոն** – Արմավիրի մարզ, Սարդարապատ
- **Խորովածի փառատոն** – Լոռու մարզ, Ախթալա
- **Հացը Լեռներում փառատոն** – Երևան
- **Նավասարդ ամենամյա փառատոն** – Գեղարքունիքի մարզ, Ծաղկունք գյուղ

Հիմնադրամը ներկայացրել է Հայաստանը նաև մի շարք միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում՝ Բուդապեշտում, Իսպանիայում և այլուր՝ որպես իրադարձային զբոսաշրջության ուղղություն:

«Արենի Փառատոն» հիմնադրամի տնօրենն է Նունե Մանուկյանը: Հասցե՝ ք. Երևան, Խորենացի 26Ա, 221:

Հույս ենք հայտնում, որ հիմնադրամի փորձը, արժեքները և գործունեությունը կարող են օգտակար լինել խորհրդի աշխատանքում՝ ի նպաստ Հայաստանի զբոսաշրջության կայուն զարգացման:

«Արենի Փառատոն» հիմնադրամի տնօրեն

Ն. Մանուկյան